



ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՓԱԿ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունում դատախազության համակարգում դատախազների ընտրության եւ նշանակման կարգը սահմանվում է Դատախազության մասին ՀՀ օրենքով եւ ՀՀ Գլխավոր դատախազության կողմից հաստատված Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման եւ դատախազների թեկնածությունների ցուցակը կազմելու վերաբերյալ կարգով¹:

Դատախազության մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ, 4-5-րդ, 6-րդ կետերի համաձայն՝ դատախազության սահմանված պաշտոններում պաշտոնի է նշանակում գլխավոր դատախազը՝ օրենքով սահմանված առաջխաղացման ցուցակներից:

Առաջխաղացման ցուցակները կազմվում են ՀՀ Արդարադատության ակադեմիայում ուսուցման արդյունքների ամփոփման ավարտին եւ հիման վրա:

Օրենքի եւ վկայակոչված կարգի կարգավորումների համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց եւ փակ մրցույթի միջոցով:

Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը, որպես կանոն, տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա հունվար ամսին: Անհրաժեշտության դեպքում արտահերթ բաց մրցույթ կարող է անցկացվել գլխավոր դատախազի հանձնարարությամբ: Դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ:

Սահմանված գոյություն ունեցող կարգավորումներով բաց մրցույթը բավարարում է հրապարակայնության ու թափանցիկության չափանիշները, մասնավորապես՝ Որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի ժամկետի, վայրի, անհրաժեշտ փաստաթղթերի մասին առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում է հայտարարություն 3000 տպաքանակ ունեցող մամուլում և դատախազության կայքէջում: Ինչ վերաբերում է փակ մրցույթին, ապա վերջինս բնույթով եւ կազմակերպման ընթացակարգով ուղկեցվում է մի շարք խնդիրներով:

Այսպես, Դատախազության մասին ՀՀ օրենքն ու Կարգը նախատեսում են, որ Դատախազների թեկնածությունների ցուցակում համալրում կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ: Ի տարբերություն բաց մրցույթի՝ փակ մրցույթի պարագայում հրապարակայնության առավել ցածր պահանջներ և պրակտիկա է գործում: Մասնավորապես, փակ մրցույթի վերաբերյալ մամուլում և դատախազության կայքէջում հայտարարություն չի հրապարակվում, հավակնորդները մրցույթի մասին տեղեկանում են գրավոր կամ բանավոր հրավերների միջոցով:

Պետք է արձանագրել, որ փակ մրցույթի ընթացակարգը առավել խնդրահարույց է ոչ միայն հրապարակայնության երաշխիքների բացակայության տեսանկյունից, այլ նաեւ այն պատճառով, որ ընթացակարգի հիմքում դրվող չափանիշներն ու պահանջները տեսանելի

¹https://www.prosecutor.am/am/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/?fbclid=IwAR3ZP-IP_YZCALOJoqyOMpbgnB-kyVLr0fkWQHH2LthTWzKVVoyucnNfmag



չեն եւ չեն արտացոլում թեկնածուների կարողությունների գնահատումը: Մասնավորապէս ընտրությունը չի իրականացվում մասնագիտական կարողությունների, անձնական որակների հիմնավոր ստուգման ու գնահատման արդյունքում: Փոխարենը, առաջին պլան կարող է մղվել օրինակ որոշակի ակադեմիական կարգավիճակ, որը չբխի և չբավարարի դատախազի պաշտոնից բխող գործառույթների իրականացումը²:

Ասվածը թույլ է տալիս պնդել, որ ներկայիս կարգավորումներով դատախազության համակարգում փակ մրցույթի ընթացակարգով իրականացվող նշանակումները մեծացնում են համակարգի նկատմամբ հանրային անվստահությունը եւ չեն բավարարում թափանցիկության ու հրապարակայնության կարևոր սկզբունքները, ինչը համակարգի արդյունավետ գործունեության ապահովման գրավականներից է:

Հաշվի առնելով վերը ներկայացվածը, **առաջարկվում է՝ Ուժը կորցրած ճանաչել «Դատախազության մասին» ՀՀ օրենքով** սահմանված փակ մրցույթին վերաբերելի կարգավորումներն ու ըստ այդմ վերացնել փակ մրցույթով համակարգում պաշտոնի նշանակումները:

Հոդված 38. Դատախազների թեկնածությունների ցուցակի կազմումը

1. Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթի միջոցով: Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը, որպէս կանոն, տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա հունվար ամսին: Անհրաժեշտության դեպքում արտահերթ բաց մրցույթ կարող է անցկացվել գլխավոր դատախազի հանձնարարությամբ: Դատախազների թեկնածությունների ցուցակում ~~լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ:~~³ Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով:

Ուժը կորցրած ճանաչել Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման եւ դատախազների թեկնածությունների ցուցակը կազմելու մասին ՀՀ Գլխավոր դատախազի կողմից ընդունված կարգերը⁴

V. ՓԱԿ ՄԲՑՈՒՅԹԸ

~~31. Դատախազների թեկնածությունների ցուցակում համալրում կատարելու համար~~

²<https://prwb.am/wp-content/uploads/2022/05/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%B8%D6%82%D5%B4%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D5%B6%D5%AB-%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A8.pdf>

³Թրեկ չենջ արված արված մասերը, այն մասերը են, որոնք առաջարկվում է հանել

⁴https://www.prosecutor.am/am/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/?fbclid=IwAR3ZP-IP_YZCALOJoqyOMpbgnB-kyVLr0fkWQHH2LthTWzKVVoyucnNfmag



- գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ:
32. Փակ մրցույթի վերաբերյալ մամուլում և դատախազության կայքէջում հայտարարություն չի հրապարակվում, հավակնորդները մրցույթի մասին տեղեկանում են գրավոր կամ բանավոր հրավերների միջոցով:
33. Փակ մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձինք փաստաթղթեր ներկայացնելուց հետո գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով) ծանուցվում են մրցույթի օրվա, ժամի և վայրի մասին:
34. Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող փակ մրցույթին մասնակցելու իրավունք ունեն.
- 1) դատախազի պաշտոնին նշանակվելու համար օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները բավարարող, օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասում նշված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:
 - 2) օրենքի 38-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով որակավորման հանձնաժողովի կողմից հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկած հավակնորդները, եթե հայտի ընդունումը դատարանի կողմից ճանաչվել է անօրինական և համապատասխան բաց մրցույթն ավարտվել է:
35. Այն դեպքերում, երբ հայտատուն իրավաբանական գիտությունների թեկնածու է կամ իրավաբանական գիտությունների դոկտոր և ունի գիտական գործունեության առնվազն չորս տարվա ստաժ, ապա հանձնաժողովը ստուգում է միայն հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը օրենքով նախատեսված պահանջներին, նրա անձնական որակները և արժանիքները՝ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ, համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում):
36. Դատախազների հավակնորդների փակ մրցույթի հրավիրման, անցկացման, հարցազրույցի, մրցույթի արդյունքների ամփոփման, որոշումների կայացման նկատմամբ տարածվում են բաց մրցույթի համար սահմանված կանոնները:

Վերանայված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հիման վրա ընդունել Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման եւ դատախազների թեկնածությունների ցուցակը կազմելու մասին նոր կարգ: